

ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՕԳՈՍՏՈՍԻ 6 -ին. Թիֆլիս. №32
ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՁԸ



ՅԵՐԱՅՈՒՅՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
Ո՛վ ասես՝ խօսում է հաշիվատարների վերաբերեալ եւ միջոցներ են առաջարկում բարեփոխելու այն.
Ոչ նի միջոց չի օգնիլ. կարելոր է այս կտրուկ ձեւը —

Մենապիտանի տամարից դուս պիտի շարունակ ինչպէս անտուղանդ դերասաններին նոյնպէս եւ ան-
պէտք Իրամատիկ. ընկ. վարչութեան անդամներին, այս վերջիններս ասիս են արժեքը կարծում

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ՄԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երզրծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթամթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ


Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլիփիչ, անկեղծ և կեղծա- չոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Աճեցածքս բերք բոլոր բնօճիֆների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շաբերին ծիծաղեցնում է; շաբերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերիդ ուզի: Հասցէն՝ Тифлисть Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան



«ԽԱԹԱԲԱԼԱՆ»

Բ Ա Ժ Ն Ե Ր Ե Կ Վ Մ Ո Յ Յ Յ

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

Մեր թերթի բաժանորդներին «Սուր- հանդակ» ամենօրեայ թերթը ուղար- կում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկա- րենք գլխիվայր:

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՕԳՈՍՏՈՍ 30 օր

6

Суббота ՀԱՐԱԹ Ծօցօտո Հուանի 25

7 (կիր.) Տօն ամենայն բելիս ուտողաց և դամաւանոցում ընդ ուրիշ կանանց հետ քեֆ ա- նելոց—վանն հոգոյ փրկութեան՝ մարմին տան- ջողաց:

8 (բ. 2.) Պահք: Յիշատակ մեռելոց Հրատա- բակահանի Գովկասի հայոց ընկերութեան:

9 (դ. 2.) Պահք: Անւանակոչութիւն սրբոց խառնակողաց Ազգային ժողովի որ ի Թուրքիոյ ցանցաւորի, Մեհրդատի Հայկազի և Լօպրազի Վրամի Վրամեան:

10 (դ. 2.) Պահք: Զայս օր վնջ պատ ուտողաց և զլօբի ուտողաց: Տօն արժանաւոր կրօ- նուսուցչաց հայոց Թիֆլիսի, որ իրենք անկրօն գոյով — զխաբեբայութիւն սովորեցուցանեն — և զմիտս աշակերտաց պղտորեն—զի վարձք առնին և ոչ աշխատին:

11 (ե. 2.) Պահք: Տօն սրբոյն լեզալ էքս- պրոպրատորաց ազգային գումարաց—եկեղեցա- կան փողից, դպրոցական գանձից, նպաստամա- տոյցի դրամից, և այլն, և այլն:

12 (ուրբ.) Տօնապահք—այսօր կարելի է գուտիլ և խորոված բաղրիջան և սառ-սառ կար- տօլ յօրի և՛ դանդուր, և՛ քոնդար, և՛ նիախուր:

Գանդուր լաւ լինի եթէ սխտոր ու քացախ ունենալոց լինի:

Տոմարագէտ և օրացոյցագէտ Աղբոսիոս արք-վարդապետ.

ԱՌԱՋՆՅԻՐԹՈՂԻ ՄԱԳԻՒՐ

Ղզբաշի շահի իստօրիէն ու հաուց կաթիլկոսական խնթիրքը մէ թաւուր է սյ:

Էրկուսի համա էլ ասում ին թէ՛ վունչ մի բան չափին, կօսէ, ու էրկուսի վրէն էլ հետտի դարմադալ, դաւի դարաբա ին բանձրացնում, գրում-խօսում, վուր էլի լաւ՝ վուր պօլիցէն մէջը չէ նընգնում:

Մանմէդ Ալի շահի համա ինչեր ա- սիս չին ասում. նա էսինց է ու էնէնց է, կօսէ, նա փիս ու անջիգար մարթ է, կօսէ, ու էդ փիս մարթու գլուխը մինչկլի մէ չէթէր միլիօն փուղ ին գին դնում: Արի ու էստի բան հաս- կացի:

Իս էս բանիքը վուր իմացայ, ի՞նչ վուր գագէթնիրումը միք հարկնի տղէն կար- թաց, թէ շահի գլուխը գին է դրած,— ասի, հայրաթտա բան ափի ասի. վուր էտղդամ գին ին տւի ասի:

Մինձ էլ կուլի սյ, խիստ մինձ:

Միր գուրձիչներու գլխներին՝ Լէօյի, Հաջի Առաքիլովի, Քալանթարի, Շիր- վանզադովի, Օխանէս Սալաթէլովի գլխներին՝ խաշապաններն վունչինչ, մինչկլի էրկու շահի էլ չին տայ սլ:

Բաս էրկում է, որ ղզբաշում ան գլխները մինձ գին ունին—ան թէ չէ շահի գլուխը հետտի մինձ ու լաւ գը-

լուխ է, վուր էտղդամ փուղ ին տալի: Միր «Հորիգոնի» Մարքարի գլու- խը ինչ ափէ. վունչինչ էլի քիթը մէ բան է. ան քիթ՝ ով գիդա խկի առու- տուր էլ չանին:

Մելիք Բախտամովինց Ակոփի վունչ քիթն, վունչ գլխին «մի դանա» չին տայ, մէ քոռ գրոշ—ինչի՛ վուր ան- պէտք է:

Խատիսով Գիգայի գլուխը կի պտփ ոչխարի, գառան ան թոխլու գլխի հան- գի է. Յովհաննէս Թումանովի գլուխն էլ էտինց. դրանք, վուր վունչինչ չա- ժէնան, էլի էրկու-էրկու շահի խօ կու- տան էս անիծած խաշոզնիկները:

Երիցով Բուզգանի գլուխն էլ գլուխ է, սյ, կօսիս, գութմա է: Գիշերը լիս է տալիս, բալկոնում փանար ու օթա- խում լամփա չին բանեցնում. սա ուլի- րօ շատ կու ափենայ:

Համա վունչ մէ գլուխ Մանմէդ Ալի շահի գլխի չափ գին չի ունենայ:

Էտէնց է ախպէր, էտէնց է:

Հայերուս գլխները մէ-մէ գրոշ չա- ժին. Ղզբաշու թաթերու գլուխը կի հագար թումներ ափէ:

Բա էստի պօլէտիկուրի բան չի՞: Էնդդամ ինչ ասիմ «Մշակի» «պօլէտի- կուս»՝ Միմոն Չորանովեանցին, վուր նա գլուխ կի չէ՛ խիլք էլ չունէ. ինչի վուր՝ խիլօք մարթը ինչի չպիտի իմանայ, թէ ինչեմէն է՝ վուր հայու գլուխը բան

ՅԵՐԱՅԱԿԻՄԻ
ՄԻՋԵՂԱՆԻ

ձղզուռ է գոռով
«Ցոցիալ» տիրացում
Ես, հանս Աստուծո,
Նորից ահամայ
Ճանճերն եմ յիշում
Եւ իսկոյն փախչում:

ԽԵՆՔ



Բ Ժ Ղ Կ Ա Կ Ա Ն

Կազեթաջի աղան, շատ տեղերից խելօք բաներ գրին կը ձեր «Պաթարալային» մէջ տպելու՝ անլուսաւոր հայ ժողովրդին լուսաւորելու համար՝ բայց մենք, արգելիցիներս ալ ինչո՞վ ենք պակաս ուրիշներից. միթէ՞ մեր մէջ ալ չկան կատարած խելօք բաներ: Ահա ես ալ բան մը պիտի գրեմ ձեր աղօթօգուտ «Պաթարալային» մէջ դպելու համար և տեսէք թէ՛ մենք արգելիցիներս, ալ ինչօրէն գիտնական ենք և ինչպիսի՞ խելքի մօտ բաներ կընենք կը: Այս անցած մօտ օրերս ես մի բարեկամ հիւանդի մօտ այցելութեան գնացի, որուն մօտ տեղացի անցէնդաւոր դօկտօր մը ալ կար հրաւիրած, ուր առհասարակ հիւանդի մասին խօսէր կը. վերջապէս որոշեց այդ հիւանդին տաք ջրի վաննա անել: Այդ անցէնդաւոր դօկտօրը սկսեց հիւանդին վաննա դնելու ձևը սովորեցնել հիւանդի տիրոջը պատերերով, որ եանդլը բան մը չանեն ու չվնասին հիւանդին, չիւնքի, վրայ բերեց մեր դօկտօրը՝ թէ մեր Արգելիում շատերը շատ եանդլը բաներ կընին կը և զուր տեղը հիւանդներ մեռցնին կը: Ես հետաքրքրեցայ և հարցուցի դօկտօրին թէ՛ ինչպիսի՞ եանդլը թիւններ պատահին կը: Անցէնդաւոր դօկտօրը պատմեց քանի մը դէպքեր, որոնցմէն այժմ այս մէկը գրիմ կը ձեր «Պաթարալային»:

«Ասկից մի քանի տարի առաջ, ասաց դօկտօրը, ինձի մի հիւանդին տարին. գնացի, լաքին ի՞նչ տեսայ. տեսայ որ հիւանդ մարդուն վաննա անելու համար տեղական մի մեծ պղնձի մը (խաշկի) մէջ լեցուցեր են առաջ իլիջաղ (միջակ տաք) ջուրը, պղինձը դրեր են կըսկի վրայ, պղնձի ջրի մէջ նստեցնելով հիւանդին՝ սկսեր են կրակը վառել ու ջուրի տաքութիւնը աւելցնել: Քանի ջուրը տաքացեր է, հիւանդն ալ մէ՛ծը սկսեր է նոյնքան թուլնալ ու քրտնիլ-գիտուն և խելօք շրջապատողներն ալ տեսնելով հիւանդի չափազանց քրտնելն՝ ուրախացեր են, որ վաննան (պղինձը) խուրամիշ է եղեր հիւանդին, և հետզհետէ պղնձի տակը կրակը այնքան են վառել և ջուրը այնքան են տաքացրել, որ վէ՛հասըլ հիւանդին ուղղակի խաշեր, թողեր են: Ահա այդ ժամին ես հասայ, ասաց դօկտօրը, և տեսայ, որ հիւանդը բոլորովին խաշեր, արդէն մեռեր է և մեռած ալ հանցիկը պղնձի մէջէն:

Այ վունց վուր հիմի գիդինք թէ ով ուփրօ լաւ ուշունց տալ գիդի ու վուր գուրձիչը ուփրօ լազաթին է կուլ տալի:

Էս էլ տալանտի բան է: Մէ մէ մարթ կի ասում է տալանտ չէ, կօսէ:

Չին գիդում բանի գօրութիւնը. չին հասկանում:

Հայերս վուր բանի գօրութիւնը հասկացողներ ըլինք Օրմանով, Սուրէնով, ան Կարապիտ ու Մեսրոպի սրբազաններու կաթղկոսանալու վրէն կու խօսի՞նք. կու գրինք:

Ինչի է. ախր ի՞նչի է:

Չունքի բանի գօրութիւնը չգիդինք, չունքի,—մեր գլխներին խաշապներն էլ փուղ չին տալի:

Տօ կաթղկոս էք ուզում ջողի՞. հա, ասէք էլի. ջողեցէք, ով է ձիր ձիւքը բռնում. ու էլ ի՞նչու էք շատ շուռ ու մուռ դալի—արեք վիկալներն մեր էփրիմ էպիսկոպոսին կաթղկոս օխնինք:

Ի՞նչ է, տանավարին շղթիկ է:

Իս ու իմ հոքին,—Գասպարն ու Գոգին, սրամէն լաւ կաթղկոս մինք ի՞փ կու ճարինք:

Բոյին պատիկ, խիլքը... շատ, համ չասպանդ է, համ դոշաղ. վուր ուզեանք օրէնը իրեք ջէր վալս-մազուրկա կու խաղայ:

Էստի դազում խիստ շատ կայ:

Խաթարալա ամենայն հաուց

Գասպար աղա Կարաուզով

ՉՐԻ ՀԱՄԵՐԳ

Ճանճերն են բզզում,
Ճանճերը տղզում,
Եւ ամեն ուրէք
Մեծ համերգ կազմում:

Ես էլ շողերից,
Հայ ազգասէրից,
Խենթ կնոջ սէրից,
Եւ շատ բաներից
Յոգնած, բեզարած,
Նստած սենեակում
Ականջ եմ դնում
Եւ հրճում, հրճում,
Որ մեր աշխարհում
Գոնէ կան ճանճեր,
Որոնք կարող են
Մեզ համար երգել
Եւ մըխիթարել:

Իսկ երբ գնում եմ
Հայերի ժողով,
Ուր որ տեսնում եմ

չածէ ու թրքի գլուխը կի թանգ է:

Մահմէդ Ալի շահը մի տարի, տարի ու կէս մէյդան էկաւ, հայհոյեց, կռիւ դարձադալ արեց ու էգքան թանգացաւ նրա գլուխը—բա մեր գուրձիչները, վուր ծնած օրից, համ դարձադալին անում, համ խառնակութիւններ, համ ստեր ին խօսում, համ ասկի փուղիր ին ուտում, համ ուշունցներ ին տալի, համ գրում ին, համ թըում, համ լարստում—բաս սրանց գլխնիրը վուչինչ չպիտի աժէնան:

Էս ի՞նչ անսովետութիւն է. էս ի՞նչ թաւուր աշխարք է:

Օրիլիաներ ենք սարքում, գուրձիչփրգիչներուն պատիւներ ինք տալի ու էլի վուչինչ էլի:

Լաւ է ախպէր:

Գէդի սուղը... ի՞նչ ասիմ, կամքը ձիւրը չի:

Էս էլ էն մէկէլ բանիրն է՞: Մինք հայերս իղբալ չունինք:

Ի՞նչի. հալթաթա խիլք էլ չունինք. էք կուլի միգէզը, էք կուլի իս ու իմ գլխում հոքին:

Մաշ մինք վուր խիլունք մարթիք ըլինք՝ կու թողնի՞նք, վուր կաթղկոսական խնթիրները շիւփիլաւ դանան:

Մաշ:

Կաթղկոս էք ուզում:

Տորգ արէք:

Ով շատ կուտայ՝ նրան նրնդրինք. էստի հետաքր բան պիտ ըլի. թէ չէ կաթղկոս իս ըլիմ, դուն ըլիս, նա ըլի՛ բոլորը մէկ չէ՞: Ազգաշի աշխարքում մէ լաւ աղաթ է էլի, մի տեղ մէկին, վուր դուբերնատ ին օխնում—փող ին առնում թուրմէ առաջուց:

Իջարան ով շատ է տւի, նա էլ էլիլ է դուբերնատ:

Էստի խիլօք բան շատ կայ:

Վա, համ մարթուն դուբերնատուրութիւն տան, համ էլ տօնլուղ: Ի՞նչ է. փուղերը խոտի հանգի է բանում:

Ֆիւս:

Կաթղկոսութիւնն էլ էտէնց պիտի ըլի. ու դուք տեսէք թէ էնչախը ի՞նչ թաւուր ասկը խիլումը կուլի:

Իմ հոքին գիդենայ:

Էն չախը էչմիաճնումը թէ դուսը դայրաթով ժամ կու գան:

Միը եպիսկոպոսները ինչ կու վիկալին, կու պահին ու կաթղկոսանալու համա աշխարհ կու բերին:

Կու գիդինանք, ով ի՞նչ ունէ, ով ի՞նչ չունէ:



—Ինչով բացատրել, որ ծխականները չենց որ
 չոգաբարձու են դառնում յարձակողականից պաշտ-
 պանդոկական դիրք են բռնում եւ եկեղեցին կիսաշէն
 Բողնում.
 —Շատ պարզ.—երբ դուք էլ չոգաբարձու ըն-
 տրէք, այն ժամանակ կընթակամաք.



Դժուար է անգամ երեւակայիւի
 Այլ Յակոբիկ, այս էնչ ես տնում, մի քան
 բաք է էնչ տնուեանցիկ երբ և դու այնպէս ջեքն
 ես համբուրում թո՛ւ. մի սաս սարք. յետոյ էնչ
 կանեա...



ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ահա այսպէս բան ալ կատարեալ է մեր Արդիւնի մէջ, աւելցուց դժգոհութիւն ու գոչք ալ այս տեսակ եանդըրութիւն մը չանէ՞ք»

Պատճառն այս պատմած բանը ինձի անւատարի երեցաւ, լաքին նա Աստուծու անւան վրայ երդում անելով ասաց ինձ, «ախարհը, ես քեզ իմ աչքերով տեսածս բանը պատմեմ կը, ինչո՞ւ համար չես հաւտար»:

Անոր հետ ուրիշ հաստատ տեղերից ալ ստուգեցի, որ իրօք եղեր է այդ բանը:

Ուրիշն, կազմեալի ադան, այս բանը միթէ դժուարեան չէ մեր արդիւնցու գիտնականութեան ու խելօքութեան:

Մնացածները ուրիշ անգամին:

- Փաստարանների շուրջը
- Ախ, պարոն Իշխանեանց, օգնեցէք, ինչպէ՞ս...
- Ինչ է պատահել, պարոն:
- Քնացել էի Մարտիրոսեանից հաշիւ ստանալու բայց նա՛ հաշիւ մաքրելու փոխարէն՝ որոտաց. «стунай къ черту!»
- Յետո՞յ...
- Յետո՞յ ինչ կարող էի անել, ուղիղ դիմեցի ձեզ:

- Իրաւաբանը (հակառակ կողմի վկային).- Ի՞նչ, բարեկամ, չափազանց ճշմարտախօս եւ ազնիւ մտք էք երևում:
Վկայ.- Պարոն փաստարան, մի դրա նման հանդիսութիւն էլ ես կուզէի ձեզ համար ասել, սակայն չեմ կարող, քանի որ երդում եմ միշտ ճշմարտը խօսել:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԳԱՆՁԱԿԵՑԻՆԵՐԻՆ

Ուսանող ժամանակը պարմանալի ընդունակ եւ յաջողութեամբ համալսարանը աւարտող:

Բոլոր քաղաքացիք երանի էին տալիս նրա ծնողներին, որ այդպիսի բախտաւոր դուստր ունին:

Պաշտօնով տեղափոխելով Գանձակ, գանձակեցոց համար երկու «Լաւութիւն» արու մէկն, որի «բարեյուսութեան» վկայութեամբ ժ...եան քիչ մնաց քաղաքագլխի պաշտօնը ստանձնի ու քաղաքի գլխին խաթարալա դառնայ, իսկ Համբարձում Սահակեանը նրան պաշտպանութեան շնորհիւ նորից մնաց Փոխադարձ վարկի կառավարչի պաշտօնում եւ խաթարալա թէ բանկի թէ քաղաքի գլխին:

Եթէ իմանաք ո՞վ է այս պատուական քաղաքացին՝ իմացողին կըտամ՝ անարգել իրեն հաշիւն Կորիւնապատոցոց համար ջուր հանելու իրաւունքը:

Քիֆլիսի քաղաքային վարչութիւնը Քնկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարադի շանտալեօր շրջապատ հագնող կանայք դժարութեամբ են բարձրանում տրամալի վագոնները. Խոյ շատերը ուղղակի դժարութեամբ էլ չէն կարողանում բարձրանալ, եւ որ գրանցուց տուժում է թէ ազգաբնակչութիւնը և թէ քաղաքային կասսան, ուստի մտադիր է Գործիչ տուգանել տրամալի վարչութեան 5000 բուբուլի եւ պատուիրել, որպէսզի մի շաքաթալայ ընթացքում նոր ձեւ վագոններ գործածութեան մէջ մտցնեն, որոնք յարմար լինէին շանտալեօր շրջապատների համար:

ՎԵՐ ԻՅՐԵՆ ԹԵՆ ՄԵՆՈՂԻՆ

(Եւէր Ղազարու Աղայեանցին *)
«Հաստ ու բարակ»-գինը մէկ է,
Վա՛յ տամ բարակ թել մանողին»
Սա տա՛ւ՝ չէ՛-մարգարիտ է.
Մե՛նե՛մ դորս յօրինողին...

Շատ առածներ է հրնարած
Հայ նանձարը, ստած, խօսած,
Բայց սորա նման մի ճիշտ առած՝
Իմ կեանքի մէջ ես չե՛մ լրտած...
Հայ թերթերը ձեզ օրինակ,
«Մուրճ» լինի նա, «Մոր Դար», «Մշակ»
Պինը մէկ է-տասը մանէթ՝
Մի փութ մուննաթ էլ նորս հետ:

Այլ օրինակ ձեզ կառքերը,
Թէկուզ նորանց անիւները
Դու ոնգինից սարքի, բայց դէ-
Մինչեւ վազալ կէս մանէթ է:
Ուստի չե՛նք էլ, նրմանապէս,
Թէ երեսը սափրել ուզես՝
Վե՛ց շահի է գինը, սխալէր,
Թէ՛ դալլաք, Թէ՛ պարիկմախէր...

Եթէ մի նոր գիրք տրպել տաս
(Այդ խօ ղու էլ լա կիմանաս)՝
Չե՛ն նայելու, թէ այդ գրքով
Խրմբագի՛ր է խօսում, թէ՞ կով:
Էլ չե՛ն հարցնի, Ատուած վրկայ,
Թէ կարդալու մէջը բան կա՞յ.
Գին են տալիս մե՛ծ ու թե՛ս անը
Եւ ո՛չ գրքի լաւ ու թե՛ս անը...
Բայց այդ քա՛ւ չէ, որ առածը
Ճշմարիտ է. իմ մե՛նածը
Եւ կարածը այն է միայն,
Որ ապրում ենք մենք ընդունա՛յն...

*) Գրած է Քիֆլիս, բայց չեմ յիշում որ թւականին: Տղապարտութեան է ուղարկում միայն այն պատճառաւ, որ ներքած է եղել Ղ. Աղայեանին: Ծան. հեղ.

Դե՛ս տանջողը այն է, ինչպէ՛ս յարմար
Շատ բաներում շորք տալիս ինձ
Պատճառ՝ ազգի ցաւին յարմար-
Չունենք տալու դարման ու ճար:

Մի մարդ-այն էլ հայ խրմբագիր,
Որ տո՛ւարը գիտէ անգիր,
Ազգի ցաւին զրտաւ դարման՝
Չեղբին դրբաւ ընթերցարան:

Հանա՛ք բան էր «օրացոյց»-ին
Կրցել նա՛ն «երագահան»
Կամ՝ այդ կրման մի լուրջ գործին
Անվախ ձեռք տալ, Ղազարու-Ջան...

Կեցցէ՛... կեցցէ՛ հայ խրմբագիր
Եւ իր տաղանդն-Աստուածածիր.
Հոգի՛ս վրկայ, թէ նա չլէր՝
Հայի բանը թամա՛ւ՛մ ըտրդ էր...

Ասա ինչո՞ւ- Աչքի՛ս վերան.
Քեզ խօ՞ յայտնի է Ղազար Ջան,
Որ հայի կեանքն է մի շինձու
Երագնելի ժողովածու:

Որ երագներն ամեն գիշեր
Աչք են հանում, ինչպէս փրշեր.
Անհամեմատ տեսնողը շատ,
Բայց մեկնող-գէ՛թ չունինք մի հատ:

Անա՛ քեզ փաստ այս երագը.-
Տ. տեսել է, որ «Տարագը»,
Եթէ Աստուած երկար կեանք տայ,-
Հոլլանդիա պէտք է գրնայ:

Բ. տեսել է, որ «Մըշակը»,
Քալանթարի այդ քարշակը,
Խօսք է տել՝ մի սո միջոց
Թողնել իրա...

Ս. տեսել է, որ «Մոր Դարը»
(Ինչ չե՞ս լսել այդ խարարը)
Լոյս չի տեսնիլ շարաթ օրը,
Զի հիւանդ է զորաշարը:

Մ. տեսել է, որ «Մուրճն» ունի
(Այպէս երագ կրնի եանի՞)
Մի չափազանց երկար ազի՛
Կէսը-Թիֆլիս, կէսը-Բաքի:

Խ. տեսել է, որ «Չանգ» թերթը,
Եթէ շուտով հասնի ներթը,
Պէտք է գրնայ (երթա՛յ բարով)
Որ քաջ նախնեաց ճանապարհով:

*... տեսել է, որ «Խաթարալան»
Ունի անթիւ էջի փայլան.
Մա երդել է հացի վերան,
Որ չթողնէ էշ անփայլան:

Գ. տեսել է Սուր. Աբբասի
(Ալանջը խո՛ւ ստատնայի)
Գլխին դրած իաշով վեղա՛ր.
Հաստտում եմ ես, Ղազար եղբայր:

Ա. տեսել է այն գիշերը,
Որ մեր Բազայ հարուստներս



Կազմել են մի ընկերություն
(Հայ գրողին տալ օգնություն*)

Ո՞ր մէկն ասեմ. խեղճ հայ մարդուն
Իսկի չկայ հանգրաւություն.
Երագներն աշխարհն ընկած՝
Մընացել է ընդ շրարած...

Դէ՛, այս դէպքում էլ ի՞նչ ջոկ բան,
Պէտք էր,—հարկաւ «Երագահան».
Գիրքը—հատած, պահանջը—շատ,—
Կըվանաւի, ինչպէս փըշատ:

Իսկ դու, անգի՛ն Ղազարոս-ջան,
Չեղբերդ ծախր եւ նիստ քո տան.
Կամ գրքիչըդ յարմարացուր
Հայ նաշակին, կամ—օ՞ղ կուլ տուր...

Մեր ընչի՞ն էր «Խնկնթ» ու «Կայծեր»,
«Սամուէլ», «Երկունք...» եւ «Իաշ-
նակներ»,
Կամ հանգուցեալ Արուսեանի
Երգը, «Վէրքը Հայաստանի»:

Մեր ընչի՞ն էր «Արեգնագան»,
«Տորգ-Անգեղ» եւ գանազան
Ճրտաիկ-մըտտիկ, անմարս բաներ,
Որ հայ մարդու զարնան տանէր:

Ի՞նչ «Յարութիւն եւ Սամուէլ»,—
Աշուղային դատարկ զըրոյց,
Թէ կուզէիր հանգիստ սպրե՛լ,
Յօրինէիր թող «Օրացոյց»...

*) Ականջդ կանչի, Թառայեան... Ախար
այդ մարդիմազարները եթէ այդ բանը մի
քանի տարի առաջ կազմէի, միթէ այժմ
դու այդ օրումը կըլինէիր... Ծան. հեղ.

Ողջը մէկ է հայի համար.
Սեն ու սպիտակ, պարկն ու ֆանար,
Հէ՛նց լանն այն է, այլոց նրման,
Մենք էլ շինենք «Երագահան»
«Հաստ ու բարակ—գինը մէկ է»,—
Այդ խօ՞ այնքան ցաւալի չէ.
Դու ականջ դիր վերջի տողին՝
«Վա՛յ տամ քուրակ թել մանողին»...

Լիլիպուսի

ՊԱՏԻՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՅՆՆԵՐ

1 յօդ. Ոչ ոք չի կարող զբաղել սիրա-
հարութեամբ առանց՝ ակցիդային հարկ
վճարելու և համապատասխան փաստաթղ-
թերի վրայ փող ծախսելու:

2 յօդ. Ամառանոցներում, պարերեկոյթ-
ներում և զբօսանքներում չի կարելի սի-
րաբանութեամբ զբաղել առանց առևտրա-
կան վկայականի:

3 յօդ. Քաղաքային այգիներում և բուլ-
վարներում զբօսելու համար հիմնելու է
կոնտրոլ սոմաակների փող վերցնելու հա-
մար:

4 յօդ. Սիրոյ անձնատուր եղած դոն-
ժուանները, հրգչուհիները վերցնում են սի-
րոյ գլխաւոր վարչութիւնից տարեկան վկա-
յական:

5 յօդ. Մենակ անձնաւորութիւնները, ո-
րոնց գլխաւոր զբաղմունքն է սիրաբանու-
թիւնը՝ տալիս են տարեկան պրոգրեսիւ
հարկ:

6 յօդ. Սիրոյ նամակները կնքում են
առանձին 20 կողէկանոց նամակադրոշմե-

րով: Սիրոյ արդիւնքը, նախնիք... Կալով
պահանջում է պետական օգնություն
7 յօդ. Ազատում է հարկերից միայն
պլանտացիան սէրը և սէրը դէպի էր մեր-
ձաւորները, այն պարզ պատճառով, որ
գրանք գոյութիւն չունեն, և նաև ամուս-
նական սէրը, որ միայն կեղծիք է:
Երիւսի քիճու տղէն

ԱՅՐ ԵՒ «ՆԻՅՆԻՍ»-ՆԵՐՈՑ

1

Աղջիկ, թող տուր ծամբդ քանդեմ,
Փրոնեմ ուսիդ ակեր-ակեր,
Հէրքիք: որքան եղար ընդդէմ,—
Դու չես տեսնում չարը գալիք:...

Թող տուր—չորեմ ոտերիդ տակ,
Վարսըդ ցօղեմ վարդի ջրով,
Նորից հիւսեմ ծաւիք երկտակ,—
Իջնեն կըրծքիդ օղակներով:

Օ, հաւատն, աղիք բալաս,—
Վերջը, անշուշտ, պիտի դու լաս...
Սէրն է միակ զարդը կեանքի,
Ճար ու դարման հոգս—զըրկանքի:

II

ՎԱՐՈՅԻՆ

Շտաբըւանից վեր էր ցայտում
Կոհակների ցօղուն թագ,—
Արևը նազ ճառագայթում...
Ես գըլխիկոր, դըժբնդակ:...

Դաշնամուրի լացող լարեր...
Մի հին երգի մեղմ նրագ.—

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Ն Ա Մ Ա Կ Ա Չ Ե Ի Ե Ր *)

ԻՆՔՆԱՍՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Կարևոր ձեռնարկ)

Ի պէտս բոլոր կեանքից ձանձրացած ու
աշխարհից խռով բոցբոլակներին.

Մ թ և բ ե ց

Ինքնասպանների ակումբի պատւաւոր
նախագահ՝ Մ.

V

Ողորմած տեւորք.

Ամբողջ երեք տարի գլուխս ուռած էր
դուռի նման մի յամառ մտքից թէ՛ ես
պիտի հրաժեշտ տամ իմ աստղ ու արևին
և այսօր վերջապէս յաջողութեամբն Աս-
տուծոյ հանգչեցնում եմ այդ ձանձրալի
գրու՛մը, փակում եմ աչքերս յաւերժի քնով:

Ես վճռել էի նախ Քուրը նետել, բայց
յետոյ թողեցի այդ միտքը—վախենալով
թէ մի գուցէ գետափից օգնութեան հաս-
նեն և աղատելով ինձ կանգնեցնեն արևի

տակ բազմութեան աչքերի առաջ, որպէս
մի թրջած կատու ու ծանակին իմ անօ-
րինակ յիմարութիւնը, անւանելով ինձ—
«խենթ, միմոս, ֆիզիկաբ...»

Ձէ, աւելի լաւ է ֆիննական զանակի
ուղիղ ու վճռական հարւածը.

Եւ ահա տողերս գրելիս բռնած ունիմ
դողող ձեռքումս այդ չարարեստ ու շող-
շողուն դրծիքը, որը իսկոյն բանալու է իմ
առաջ մեծ ոչնչութեան դոնները:

Ես ծիծաղում եմ.

Իմ ինքնասպանութիւնը ոչ մի այլ յար-
գելի շարժառիթ չունի, բացի վայրի նա-
խանձից, որը տածում էի դէպ հազարաւոր
ինքնասպանների հոգիները և որը վերջա-
պէս դարձաւ ինձ համար մի անանց խելա-
յեղութիւն:

Տեսնելով և յաճախ թերթերում կարդա-
լով թէ ինչպէս խուճապում են մարդիկ
դէպի մահու ծոցը, ես չուզեցի յետ մնալ
նրանցից: Գուցէ դրա մէջ կայ մի լաւ բան,
որ ես գեո չգիտեմ. այլապէս ի՞նչու ինձա-
նից աւելի խելօք մարդիկ ձեռք են բարձ-
րացնում իրենց անձի վրայ...

Ձէ, ես կըփորձեմ, որքան էլ դառն լինի
այդ հաճոյքը, միևնոյն է վաղ թէ ուշ պի-
տի մեռնել...

Նամակս թողնում եմ նրանց—որոնք ա-
ռաջին անգամ կըգտնեն իմ ցուրտ ու ա-
րևնուտ գիակը, որովհետև ես ոչ մի մտե-
րիմ հոգի չունիմ անհուն երկնի տակ, ո-
րովհետև ես երբէք չեմ սիրել, ու սիրելի
չգիտեմ, որովհետև իմ սիրտը կոյր է
խուլ է...

Ձեզ եմ նւիրում այսուհետև ի յուշ ամ-
բողջ թիֆլիսը Վէրայի այգիներով, սիրուն
Օրթաճաւան թարմ ձկների սկուտիներով
ու շարմանկայի հոգեզմայլ նւագներով, բոլոր
հոյակապ շէնքերը, բոլոր վայելքներն ու
շիկը...

Ապրեցէք, քրտնեցէք, տանջեցէք այլ
տաժանական շոգերում, ինչ կուզէք արէք
ձեր քէֆն է. իսկ ես գնում եմ այնտեղ
ուր թերևս անթառամ են ծաղիկները, յա-
ւիտենական է հոգիների կեանքը, անանց
են ամեն վայելքները...

Այն, այն, ես գնում եմ այնտեղ—մշտա-
կան դովերի, իսկական գեղեցիկութեան, ե-
րևակայական հրեշտակների հայրենիքը...

Մի օր ապրել—և շատ լաւ ապրել—այն-
այս է եղել իմ ճղճիմ հաւատի սիմվոլը
որը ներածում եմ ձեր մէջ օ կենդանի
մարդիկ:

Թաղմանս ժամանակ խնդրում եմ չհանն

*) Տես «Պատարալ» № 31.

«Անցածք, կեանքիս գարնան օրեր,
«Անդառնալի և արագ:...»

Երգը մարեց: Իջար պարտէզ:
Լուս իմ մօտով անցկացար...
Պարզ կարդացի քո դէմքին հեզ.
«Ախ, որքան շուտ ձերացար:...»

Սեան-Յախօ



«Հասունութեան» վկայական ստացող
աշակերտի քննութիւնը

Աւսուցիչ.—Երեսասարդ, ասացէք խնդրեմ ջրը հեղեղից յետոյ ինչպէս էր դուրսիւնը:
Սօսկիւր.—Մարտափելի և անանցանելի ցեխ ու ճանիճ էր գոյացել ամեն տեղ, նոյն իսկ կտրքերով անցնել անհնարին էր:
Աւսուցիչ.— Ի՞նչ կասէք դուք հանգուցեա Տրիդրիկ Մեծի մասին:
Սօսկիւր.— Ի՞նչ միթէ նա մեռել է, անխ, ասի սու մարդ. այդ չէի սպասում:
Աւսուցիչ.— Իսկ ի՞նչ կասէք Ալէքսանդր Մակիդոնացու մասին:
Սօսկիւր.— Ալէքսանդր Մակիդոնացու համար բացի լաւից՝ ես ոչ մի դատ բան չեմ կարող սանի:

Քննութիւններին

Աւսուցիչ.—Երեք և եօթը ի՞նչքան է:
Սօսկիւր.— Իրիւրը: Խօջա



ՍԷՐ ՈՐՈՆՈՂԸ

Դատաստանական պաշտօնի թեկնածու Արշակ Իվանովիչը ամառանոցներից մէկում մի բնակարան վարձեց:

—Շատ ուրախ կանց կացնեմ ես ժամանակս, գովում էր ինքն իրեն Արշակ Իվանովիչը ճաշարաններից մէկում նստած իր մի բարեկամին, կըսկսեմ աղջիկներ յետևից ընկնել, կըստեղծեմ մի սիրավէպ, բայց ոչ մէկը, այլ մի քանիսը... Ես սիրում եմ առհասարակ այն վէպերը, որոնք լինեն բազմակէտերով, շքեղ տեսարաններով և...
—Բայց տես ուր փորձանքի մէջ չընկնես —նախազգուշացնում է նրան իր բարեկամը:
—Ե՞ս, սպազայ դատաստանական քըննիքն... Ոչ: Ինձ այնքան էլ յիմար մի կարծիք:

Միւս օրւանից Արշակ Իվանովիչը սկսեց հոտանդուն կերպով հետապնդել իր ամառանոցի տանտիրուհուն, որը այնքան երիտասարդ, գեղատեսիլ և սեռահայ էր:

Միւս օրը, նա արդէն քնքօրէն համբուրում էր տիկնոջ ձեռքը: Երբորդ օրը արդէն նա գրկում է նրա իրանը, իսկ չորրորդ օրը՝ արդէն տիկնոջ ամբողջովին պատկանում էր դատաստանական պաշտօնեայի թեկնածուին:

—Դու սիրում ես ինձ, Չագան, հարցնում էր նա վացուռներով և վացուռումէկերով համբոյրներ քաղելու միջոցին:
—Խելագարի պէս, շնջում էր տիկնոջ, ես քեզ կըսիրեմ միշտ և միշտ:
Բայց չնայած, որ անհաւատալի է, թէ այդքան կարճ ժամանակէլ ընթացքում

տիկնոջ կարող էր սիրել, այնպէս չէր Արշակ Իվանովիչը հաւատում էր իր սիրելի չէր կարողանում թիֆլիս գնալ, որ իր յաղթանակի լուրը հաղորդէր իր բարեկամներին, որովհետև տիկնոջ նրան իր ձեռքից բաց չէր թողնում:

—Ես չեմ կարող առանց քեզ մի բոպէ անգամ ապրել, Արշակ ջան, այսպէս էր ամեն անգամ տիկնոջ շնջում համբուրելիս: Եւ այսպէս անցնում էին սիրոյ հինգերորդ, վեցերորդ և եօթերորդ օրերի քաղցրիկ ժամերը: Բայց ութերորդ օրը տիկնոջ յետ քաշեց համբուրելուց և ասաց.

—Դու պէտք է, որ ինձ ապացուցես քո սէրը:
—Միթէ սէրը պահանջում է ապացոյց:
—Այո, երբ ես ապրում էի Միրանեանի հետ, նա տալիս էր ինձ ամիսը 200 ռուբլի: Դու սիրեցիս ես տալու: Ես երկու հարիւրից պակաս չեմ կարող... և դու պէտք է, որ այդ փողերը ինձ տաս այս րոպէին:

Արշակ Իվանովիչը հանեց գրպանից երկու հարիւր ռուբլիանոց թղթադրամներ և վըճուռեց փոխել ընակարանը:
—Բայց գիտես ի՞նչ, Չագան, ես ստիպւած եմ բնակարանս փոխելու: Մէրը ինձ միանգամայն աշխատանքից բաժանել է, բայց չէ որ սրանով տակաւին չի փոխել մեր յարաբերութիւնը:

Վարձելով մի այլ ամառանոցում ընակարան, դատաստանական պաշտօնեայի թեկնածուն, որոշեց այլևս «որբեկայրի» կանանց չհետապնդել:
—Թող կորչեն բոլոր տիկնայք, նրանք ինձ միանգամայն կըբանդեն: Մարդ էլ միթէ կըգժել նրանց համար, երբ այստեղ

VII

մատանիս և ոչ ոքի չմեղադրել իմ մահւան համար:

Մէկ... երկու... երեք...
Տէր, ուղղեա գգնացս իմ...
VI

Իմ Սառա, անմեղութեան հրաշալիք. ես սարսափում եմ իմ հաւատամքից, սակայն թւում է ինձ թէ ոչ մի այլ բժիշկ, բացի մահից չի կարող հոգուս ցաւը դարմանել:

Գիտես բարեկամուհին, ես ապրել եմ արդէն ու այս օրերը իմ փոթորկալի կեանքի տխրաբեր տոկոսները միայն համարելով, ուզում եմ ազատել քեզ մի անգամ ընդմիջում մի թոքախտաւորի անտանիլի ընկերակցութիւնից:

Ես, որ ծնել եմ խենթութեան ծոցում, նեխած ու մոլեխքանչ հոգիների գերեզմանում, վայրի հալածանքի մէջ ես, որ մանկութիւնից ապրել եմ տառասակոտ ուղիներում, դժւարին, որոնումներին մէջ մենամենակ կրելով ցաւած ուսերիս անանց երազներս բոցավառ ֆիմիամը, ես, որ կեանք գալով միմիայն վիշտն եմ ճանաչել և միևնոյն ժամանակ հեզնել, երգել ու սուլել:

ծիծաղել մանկան ծիծաղով... այժմ արդէն կատարելապէս յուսահատուելով թունաւորում եմ ինձ մօրժիլով—այդ կերպ վերջացնում եմ աշխարհի կեանքի հետ իմ հաշիւները, առանց քեզ տեսնելու, մենակ, մենակ...
Չքնաղ Սառա, այժմ լսիր մեռնող սիրելուդ աղաչանքը—լաւ ճանաչիր այդ մարդկանց, որովհետև ընդհանրապէս նրանք ստոր են ու ապիկար... նրանք կըհրեն քեզ անդարձ կըստի ճանիճը—այնտեղ ուր նեխել են հազարաւոր դիւրահաւատ կանայք...
Ո՛հ... նրանք չեն խղճալ հողի տակ հանգած իմ սիրող սրտին ու չեն ամիսոսալ քո անմեղութեան...
Մի հրապուրելի յոռի գեղեցկութեամբ, որովհետև կեանքի մէջ իսկապէս ոչ մի գեղեցկութիւն չկայ, այլ երբ մենք սիրում ենք, մեզ բնականաբար գեղեցիկ է թւում —միմիայն թւում... բարև մնաս:
Վերջին անգամ մըմնջում եմ քո սրբազան անունը և...
Օ՛ ինչ թանկ է իմ իւրաքանչիւր հառաչանքը...
Աղերսում եմ ոչ ոքի չմեղադրել իմ մահւան համար:

Ես չեմ լալիս, թէ ես ափսոսում եմ իմ անպիտան գոյութիւնը, դէմս կոյր մահը իր շողշողուն մանգաղը ուսած և ծափ է տալիս և պարոճում... պարոճում...
Սոսկալի է:
Բարև մնաս, դաւաճան Յիլիա, դու իմ հրէշ ու հրեշտակ, որ սպառեցիր հոգու ուժերը, մարմնիս հիւթերը, գրպանիս նիւթերը... ես այնուամենայնիւ չեմ անիծում քեզ, թէ ես դու երես դարձրիր քո տարագիր սիրողից:

Բարև մնաք և դուք գինու տակառներ, օղիի սրւակներ, գարեջրի գաւաթներ, արբեցողութեանս սեթեթով ընկերներ... դուք ևս պակաս հարւածներ չհասցրիք գրպանիս, հոգուս ու մարմնիս...
Տողբոս գրելիս—մահիցս մի քանի բոպէ առաջ մըմնջում եմ իմ սովորական բառերը.
—Մի՛ր և վիշտը կանցնի...
Բայց իմ այդ օրհասական վերջին կարիքի համար հինգ կոպէկ անգամ չունեմ, որովհետև գրպանումս եղած ամենավերջին 15 կոպէկը զոհել եմ իմ ամենագերագոյն հաճոյքին, այն է գնել եմ կարբօլեան թըթուս...

այսպիսի աննման և աւագակ «գործիչներ» կան, որոնց տեսնողը կը խելագարուի, թէ կը զուգուի իմ նպատակին կը հասնեմ և շատ փող կը ծախսեմ, բայց ոչինչ...

Եւ հետեանքը այնքան էլ երկայն չտեսց, ինչպէս նա էր կարծում: Դաշան, որին աղափրկներ թագուհի կարելի էր համարել, աղափրկ իսկ արբեղումի թաշակինակ ընծայ ստանալուց՝ անձնատուր եղաւ...

Բայց յաջողութիւններին միշտ դուզորդում էր անյաջողութիւնը:

Մէկ անգամ, երբ նա տեսակցութեան էր գնում Դաշային, դռան մօտ կասկածելի մի շուկ լսեց և կանգ առաւ:

Պարզ է, որ նրա մօտ գտնուում էր մի պէ պարուն:

Արշակ Իվանիչը նայեց իրեն ծանօթ անցքը, այն ինչ որ նա տեսաւ այնտեղից, ստիպեց նրան յետ քաշել...

— Թո՛ւ, անամօթութիւն, և դեռ կան մարդիկ, որոնք երեւակայում են, որ իրենք իշխում են գործիչներին, իսկ նրանք իրենց ժամանակները դռնապանների հետ են անցկացնում:

Նա թքեց ընդ միշտ գործիչնայի վրայ ու շարունակեց իր ճամբան, և երբ նա տուն հասաւ կարդաց սեղանի վրայի նամակը, որը հետեւալ բովանդակութիւնն ունէր.

Պարտաւոր եմք, Արշակ Իվանիչ. Մանէն ինձ ամեն բան ասաց, որ դուք իրարից երբէք չէք կարող բաժանուել: Ես երբէք իմ կնոջ վրայ չեմ բռնացել, ես հեռու եմ վանդալ լինելուց, կիրս վաղը կը գայ ձեզ մօտ...

Այնուհետեւ դատաստանական պաշտօնայի թեկնածուն չսկսեց շարունակել կարգալը, այլ մօտեցաւ իր ճամբուրակին և վերցրեց:

— Էնց այսօր և եթ ես կը մեկնեմ այստեղից: Ես այսուհետեւ ոչ մի դէպքում ուրիշներ կանանց, նոյն իսկ ազատամիտ տիկնանց, գործիչներին հետ գործ չեմ ունենայ. բաւական է:

... Բայց առանց վէպերի ամառանոցում

Օ՛ անտանելի է կեանքը—
Բարե մնաս, իմ ասող Օրբոն...

VIII

Տակաւին սիրելի և անգուգական իմ Օսիկ:

Երեկ գիշեր միայն ես լսեցի, որ խորտակեա՞ծ է իմ ամենավերջին յոյսը... որ դու միայն խաղացել ես իմ խեղճ ու լալկան սրտի հետ... և իսկոյն անխնամ կերպով հաւաքելով վարսերս chapeau-ի տակ, վազեցի մօտակայ դեղատունը ու գնեցի քացախի թթուտ—որով թոնաստորում եմ ինձ:

Այս տողերը կարդալով, դու ի հարկէ չես մտնաւ մասնակցել իմ տխուր յուղարկւորութեանը...

Անգութ, կնախոշո՞ղ...

Երեկ գիշեր միայն ես լսեցի, որ խորտակեա՞ծ է իմ ամենավերջին յոյսը...

ճանձրոյթից կը մեծնի մարդ և նա վճռեց: Այսուհետեւ օրիորդների հետ գործ չպէտք է ունենալ, որպէսզի օրիորդի ծնողները չըտարակն ինձ ամուսնանալ: Ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ է նշանակում ամուսնութիւնը:

... Իսկ կուրսիստիկաները, այ ինչ կասեմ, չէ որ նրանք հայրական իշխանութիւն չեն ընդունում: Նա ծանօթանալով մէկ կուրսիստիկայի հետ, սկսեց նրա հետ սիրաբանութիւն անել... և երեք շաբաթից անա թէ նրանց միջև ինչ խօսակցութիւն էր տեղի ունենում:

— Արշակ, մենք պէտք է որ միասին ապրենք, կամ դու պէտք է դառն ինձ մօտ բնակուելու, կամ ես քեզ մօտ:

— Հրանուշ, այդ անհնարին է:

— Ի՞նչ է, դու վախենում ես հասարակական կարծիքից: Մենք, մեկ յարգողներս, պէտք է որ այդ բանից բարձր լինենք: Այսպէս ուրեմն, կամ ես քեզ մօտ, կամ դու...

— Արշակ Իվանիչը ճակատի քրտինքը սկսեց սրբել:

— Ես... ես քեզ բոլորը չեմ ասել, ես չէ որ ամուսնացած եմ:

Հրանուշը վեր թռաւ տեղից:

— Ամուսնացած ես, բայց սիրո՞ւմ ես կընոջ:

— Ո՛չ, ո՛չ:

Հրանուշը սկսեց ման գալ սենեակում:

— Ձեռ սիրո՞ւմ ուրեմն, ուղիղ... Ահա թէ ինչ. ես չեմ կարող առանց քեզ ապրել, իսկ դու էլ չես կարող քո չսիրած կնոջ հետ կենակցել... Այստեղից հեռում է, որ մենք պէտք է միասին մեռնենք:

— Մ...մե...մեռ...նե՛ր:

— Ինչո՞ւ հոգեակս, դու այդպէս վախեցար միասին մեռնել, դրանից լաւ բան չկայ աշխարհում:

Ահա ես սեղանիս արկղում ատրճանակ ունեմ, ես քեզ կարձակեմ ատրճանակը, իսկ դու էլ ինձ:

Արշակ Իվանիչը շարժեց ձեռքը:

Ահա լուծում եմ գօտիս, լուծութեամբ ցրել եմ տալիս վարսերս, հանում եմ բաճկոնս, շրջագրեաւ... բոլորը, բոլորը... մերկանում եմ կտտարկապէս և մտնում եմ լողարանը, կանխապէս դարձաբերով աւազանի շուրջը կարճաթոշիկ կակաչներով, վարդ ու նարդերով, խրիզանտէմներով ու դաշտային ամենազրան դալար դաղձերով...

Այդ իմ քմահաճոյքն է. ես ուզում եմ լաւ մեռնիլ...

Ձեռքումս սեղմած քո թաշակինակից ծծում եմ արտասահմանեան օրիւրդէրայայի բուրմունքը ու ջերմ համըրոյներ եմ տալիս ծայրին կարեած քո անւան մենագրին...

Նայում եմ հայելիի մէջ ու ստեղծում...

— Սուրբ Աստուածածին, որպիսի գազանային թախճոտ յուսահատութիւն է շոգում իմ յոգնած աչքերում...

Ա՛խ... երեկ գիշեր միայն լսեցի, որ խորտակեա՞ծ է իմ ամենավերջին յոյսը... ու

Ո՛չ, ո՛չ, ամեն մէկը ինչ-ինչ խոստանալով: Հրանուշը պարպեց ատրճանակը իրեն և վայր ընկաւ: Արշակ Իվանիչը քաթանից ձեւմակ պատուհանից դուրս ցատկեց և սկսեց վազել... նրան հետեւում էին մարդիկ...

Անդէր

Չուիցերիայում

Մի հարուստ վաճառականի կին ճանապարհորդում է իր դստեր հետ Չուիցերիայում:

— Մայրիկ—բացականչում է օրիորդը հիացած— տես ինչ գեղեցիկ են այս լեռները:

Մայրը չէ համբերում և նկատում է կոպիտ կերպով ի՞նչ դստեր:

— Ձեռ հասկանում աղջիկս, թէ ի՞նչու ես և ի՞նչու հիանում, երբ նրանք քոնք չեն:

Փողովարանում

Փողովարաններից մէկում կանանց սեղանի շուրջը բոլորած թուղթ են խաղում մի վաճառական, մի գրականագէտ, մի գինւորական և մի քանի դերասաններ: Գրականագէտը տարւում է և խնդրում է վաճառականից պարտք: Վաճառականը մերժում է, Գրականագէտը վերաբերւած նկատում է:

— Մի՞թէ ձեզ համար ամօթ չէ, միք մոռնայ, որ ձեզ դիմողը գրականագէտ է:

— Ինչ իմ պէտքն է, որ դուք գրականագէտ էք—նկատում է վաճառաճանր—երբ ես էլ փող չունեմ, ես էլ գրականագէտ եմ:

Բուդ.

ԱՅՍԵՂ-ԱՅՍԵՂ

Մեծ կոմոսի այլ և այլ անդամների նախաձեռնութեամբ

— Ի յու՞ ց հայկական սիուր միջակի —
տրտող ՀԱՄԵՐԳ-ՉԱԽԵՇ ՏԻ ծրագիրը

Նաւի տեղ թէկուզ մի տաշտ տուէք ինձ—
Հեռու սրանամ սուղ Սալոնիկից,
Այնտեղ՝ ուր հայն ունի խաղող նինջ,
Ունի գոյութիւն-տակաւին անջինջ...

հիմա մեռնում եմ... Աստուած քեզ հետ Օսիկի...

Թող իմ արիւնն ու գայրացած հոգին երկնի պատիժը չբերէ քեզ վրայ—չէ որ իմ անկումը Աստուծոյ ցասումը կը շարժէ...

Ու... երեկ գիշեր միայն լսեցի, որ խորտակեա՞ծ է իմ ամենավերջին յոյսը... դիւստրին գիշեր... Բարե մնաս.

Իմ մահւան համար խնդրում եմ առանց այլ և այլութեան մեղադրել օրիորդ Լ. Զ...ին Ես նրա հետ թէև ամենևին ծանօթութիւն չունիմ—սակայն ասում եմ՝ թէ նա ինձանից աւելի գեղեցիկ է... Կրկին բարե մնաս:

Մարիկ



Ամառանոցում եկած հարմարու փնտրող



Ամառանոցային մայր, զոքանիչ և ամուսին




Ամառանոցային օրհորգներ, հարմարուներ



Ամառանոցային երիտասարդներ



Ամառանոցային հայր և ամուսին



— Ունայով դունդունում է կալանաւոր Համիդը:

վտանգ է սպառնում, քան թէ արտաքին թշնամին:

Երդում եմ անա Ղուանն ու Քեարով, Սալար զարդաշխ, արով ու կարով, Որ չեն դադարիլ քանի կամ ես գեռ Դարգեր ու դաւեր, Զարգեր ու աւեր...

— Երգում է «Գարփուզ օղլի զարփուզ» Մահմեդ-Ալին «Ալայլի-զիլէլի» եղանակով:

Ինչ ազգ որ յոյսը դրել է միայն եկեղեցականների վրայ—նրա կործանման սկիզբը մօտ է վախճանին:

Մառայի հայրենիքի թշնամուն, իր ազգի կործանողին, բարձրացնել նրա փառքը և զօրութիւնը—այդ նշանակում է ի փաստ իր ազգի գործել:

Կորչի նենգաւոր ЖИД-երից վառթար— Հայ ազգը ժահրոտ—ցեցը կովկասի...

— Ատամներ կրճտացնելով— ճշում են քաղաքական կապիկներ՝ Պուրիշկիչ, Մենշիկով, քաւթառ Սուվորին և ԿՕ:

Ով որ իր ազգը, իր հայրենիքը չի սիրում,—իրաւունք չունի ուրիշներից սէր պահանջելու:

Պատմութիւնը մի դասարան է, որի մէջ ապագայ սերունդը կրթւում է, զգուշանալով իր նախահայրերի սխալներից:

Գողն իր տունը չի կարող շինել, բայց ուրիշի տունը կըբանդէ:

Մարդկային բախտն ու դժբախտութիւնը միևնոյն սանդուխքով են ել և էջ անում:

Գազանների հետ բարեսրտութեամբ ոչինչ չես կարող անել, հարկաւոր է անգթութիւն:

Ժողովեց՝ Գ. Բար.

Battez tambours!...

— Կատարում են՝ երիտասարս թիւրքերը:

Դէպի ճրագի լոյսը ձգտելով Փոխանակ ձեր մայր եկեղեցին սուրբ, Օ՛ դուք անըզոյշ հայ թիթեռնիկներ, Այդ կերպ խանձում էք ձեր թևերը նուրբ...

— Շարական-ստեղի, երգում է՝ հայ հոգևորականութիւնը:

Փուչ էր յօղւածը մեր—«վաթսուն ու մէկ», Փուչ էր Փարիզեան կոնգրեսի յոյսեր...

Ախ նորա ամենքն ալ մեզի ծաղրեր են... Աստուծոյ ծաղր է աշխարհն ալ արդէն: Մրմնջում է՝ հայ յեղափոխութիւնը—թուլացկոտ:

Առաջնորդները մեր—թուլումբաշներ, Ուսուցիչները՝ այրուբենիսաներ, Մենք էլ հալածւած... միշտ անզօրավիզ... Յուսահատութեան մի անել կղզում— Կորչում ենք իսպառ...

Աջը՝ հուր է, Զախը՝ մուր է, Վերը՝ սուր է, Վարը՝ ջուր է... Եւրոպ ինչ անենք...

— Հեծեծում է՝ Հայկայ սերունդը:

Vieille chanson...

— Երես դարձնելով, ասում են՝ Անգլիան ու այլ պետութիւնները: Մարիկ

ՄՏ-ԲԵՐ ԵՒ ԸՓՈՐԻՉՄՆԵՐ

(Ռիաֆֆիի)

Մեծ գործերը մեծ դո՛ն են պահանջում:

Կան մարդիկ, որոնց մահն աւելի վտանգաւոր է, քան նրանց կեանքը:

Ներքին երկպառակութիւնն աւելի մեծ

Պոստ-Արևիկոս

Ջուլեա. պ. Արսաւէյ Տէր Սեփականցի. Այդ պարոնները, որ ձրի թերթեր են կարգում, զբաղանց մենք կընկարենք, եթէ պատկերներն ունենայինք. բայց քանի որ չունենք—խնդրում ենք մեր կողմից զբանց մի մի ձրի շուրջ» ընծայէք,

Երևան. Տ. Ա. Բ.—Գանգատում էք մոծակները համար—ինչի չէք գանգատում խելածակները վերաբերմամբ:

Շուշի. Սահառանցաւորին.—Մենք դէմ չենք եթէ դուք սիրահարւում էք հայրենիքում: Կարող էք:

Կիսլավոզսկ. օրիորդ Մ.—Իսկապէս զգեցանք: Ինչպէս բացատրել. հապա էլ ինչու էք մնում այդտեղ:

Թիֆլիս. Մամիկոնի.—Իրերկիկօ. կուլի վուր էտէնց էլ ըլի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՍԻՆԺ Ի յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԲՐՕՇԻՐ

Մ Ա Բ Ի Կ

«ՆԱՄԱԿՆԵՐ ԸՌ ԼԻՆՆ»

Գանողին խնդրում են թողնել «Սաթաբալա»-ի խմբագրատանը, գոհացուցիչ վարձատրութեամբ: 10—4

АТРПЕТЪ

1. **Мамед-Али-Шах**
Народное движение въ Персіи **ЦѢНА 1 РУБ.**

2. **Рахим-Хан**
Смуты въ Персіи **ЦѢНА 20 КОП.**

3. **ИМАМАТЪ**, государственный строй и религиозное возрѣніе въ Персіи, **цѣна 1 руб.**

4. **БАБИТЫ И БЕХАЙТЫ**
Новое религиозное теченіе и ученіе въ Персіи **цѣна 60 коп.**
Во всѣхъ книжныхъ магазинахъ. **00—2**

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏՅԻՆՆԵ է

Ե. Յ. Ծ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

— Գ Է Պ Օ Յ Ո Ւ Մ —

որտեղ և վաճառուում է գործարանային գներով:

Թիֆլիս, Դվորցովսկա փողոց:

50—18

ԵՐԱՆՍՊԱՆ

40 օր! ՉԲԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարգալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են),

ՓՈՂՐ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

սո ձեռնարկի գինը ճանապարհածախարհով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 փ., երկուսը—1 ր. 90 փ., երեքը—Մ 2 ր. 80 փ., չորսը—3 ր. 65 փ.: Պատուէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար: Ս. Սեպերբուրգ, Սեպերբուրգսկ. ցորոնա Բոլշոյ պր. № 56—609, Կ. Սեպերսք. 482 00—13 (Ե. Ն. 2.)

Ի-ԻՆ Խ Ո Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Կ ՈՒՐ Ս ԵՐ

Լիակատար կուրս լեզուներ «ՊԱՍ-ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ԾԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 ընդհանուր կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբանների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերագիր վճարով 2ր 60 փ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդաբար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ո. 20 փ., երկու գիրքը միասին 3 ո. 35 փ. (կարելի է մարկաներով): պահանջներով դիմել բացառապէս Կ. Սեպերսք, Ս. Սեպերբուրգ, Սեպերբուրգսկ. ցորոնա, Բոլշոյ պրոսպ. № 56—609, 483 0—13 (Ե. Ն. 2.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ՉՐԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!
Եթէ Դուք հիւանդ էք սֆիրիսով, տրիպլերով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է ժողովրդականութեամբ—պահանջե՛ք «Հանրամատչելի բժշկարան գաղանի հիւանդութիւնների տղամարդու, կանանց միդասեռական օրգանների», նկարներով և բազմաթիւ ընդհանրներով մօտ 250 երես: Գինը ճանապարհածախսով ու վերագիր վճարով 1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղանի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերագիր վճարով 1 ր. 40 կոպ.: երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով): Միակ պահեստը Ս. Սեպերբուրգ, Սեպերբուրգ. ցորոնա, Բոլշոյ պրոսպ. № 56—609 Կ. Սեպերսք 484 (Ե. Ն. 2.) 0—13



Первокл. ресторакъ „АННОНА“

„Здание Архитектическаго Общества“

Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

50—15



Բ Է Ս Տ Ո Ր Ը Ն - Ճ Ե Շ Ե Ր Ը Ն „ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայրամար տեղ թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՅ

— Երոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խահանոց ու պատրաստակամ ծառաներ

25—15



== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է ==

Ն Ա Ր-Դ Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ


Գինն է 75 կոպեկ

Գլխաւոր պահեստը «Դուտտնեբրգ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները:



—Կտակի համաձայն, պէտք է որ մենք վաղուց բարեգործական նպատակների յատկացնէինք մօտ 200,000 բուրլի, այն ինչ՝ հինգ վեց տարի է չենք տալիս...
—Ի՞նչ էք շտապում, սիրելի բարեկամ, տոկոսնեքից զուր էլ օգուտեք մենք էլ. դա պակաս բարեգործութիւն է: Մեր տանը բարեգործական ոչինչ չկայ. տարեկան մի երկու հազար ինձ տւէք, հաւատացնում եմ կտակն, էլ կըմոռացրի մտակն էլ, և վերջը էք հազարներն էլ ձեզ կըմնայ:

Ն Ո Ր Ա Գ Ո Յ Ն Ս Ա Ր Ս Ա Փ Ն Ե Ր



Ճանապարհի տւեր...